

ԱՆՂԵՐԵՆԻ ONE'S WAY ԵՎ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՉ ԴԵՐԱՆՈՒՆՈՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԱՌԱՋՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես անգլերենի **one's way**, այնպես էլ գերմաներենի անդրադարձ դերանունով կառույցների միջև կարելի է գտնել որոշ կարևոր ընդհանրություններ, իսկ անդրադարձ դերանվան կիրառումը և խոյալ կառույցի հնարավոր մեկնաբանությունները կարելի է բացատրել գերմաներեն լեզվի քերականական առանձնահատկություններով:

Պետք է նշել, որ ներկայումս անգլերենի **one's way** կառույցը աչքի է ընկնում գործառական ոչ նշույթավորվածությամբ:

- (1) a. *Babe Ruth homered his way into the hearts of America.*
b. *Bill belched his way out of the restaurant.*

Այս կառույցը նախ և առաջ հետաքրքիր է նրանով, որ "homer" և "belch" բայերը անանցողական են և հետևաբար ուղիղ խնդիր չեն պահանջում, այնուամենայնիվ (1) օրինակում **his way** կառույցը հանդես է գալիս որպես ուղիղ խնդիր:

Անգլերենի **one's way** կառույցը կարելի է մեկնաբանել երկու ձևով: Առաջին օրինակը կարելի է անվանել իմաստային մեկնաբանում, իսկ երկրորդը՝ վարքի մեկնաբանում: Նույն կերպ, գերմաներենի անդրադարձ դերանունով կառույցը (2a) օրինակում կարելի է մեկնաբանել որպես իմաստային մեկնաբանում, իսկ (2b) օրինակում՝ վարքի մեկնաբանում:

- (2) a. *Er jubelte sich in die Herzen der Fußballfans.*
b. *Er bettelt sich durchs Land.*

Բացի այդ, երկու կառույցների միջև կան նաև մի քանի ընդհանրություններ՝ իմաստաբանական սահմանափակումների տեսակետից: Ինչպես անգլերենի **one's way** կառույցը, այնպես էլ գերմաներենի կրավորական կառույցը կազմվում են միայն այն բայերից, որոնք ցույց են տալիս որևէ գործունեություն: Այստեղ, խոսքը ոչ չրգատիվ բայերի մասին է: Հայցական չպահանջող բայերից, ինչպիսիք են *break/brechen*, *burn/brennen*, *melts/schmelzen* այդ կառույցները չեն կարող կազմվել:

- (3) a. * *The window broke its way into the room¹.*
b. * *Das Fenster brach sich ins Zimmer.*
- (4) a. * *The wood burns its way to the ground.*
b. * *Der Baum brennt sich auf den Boden.*
- (5) a. * *The butter melted its way off the turkey.*
b. * *Die Butter schmolz sich aus dem Truthahn.*

Երկու կառույցներն էլ կարող են կազմվել միայն այն բայերից, որոնք ենթադրում են բառային – հասկացական կառուցվածք: Առաջարկում ենք ներա-

¹ (*) Այս նշանը ցույց է տալիս, որ տվյալ նախադասությունը քերականորեն սխալ է և որպես այդպիսին կիրառվել չի կարող:

ռում է հաճախ որոշ «խոչընդոտներ»: Ըստ այդմ կարելի է ընկալել հետևյալ գույգ նախադասությունների քերականական տարբերությունները:

(6) a. ?? Sally drank her way through the glass of lemonade.

b. Sally drank her way through a case of vodka.

(7) a. ?? Sie trinkt sich durch das Glas Limonade.

b. Sie trinkt sich durch eine Kiste Bier.

(8) She bought his way into the exclusive country club.

Er kaufte sich in den exklusiven Club.

(6a) և (7a) օրինակներում հեշտ է տեղի ունենում փոխաբերական առաջարժումը և բացակայում է «խոչընդոտը»: (6b) և (7b) օրինակներում ակնհայտ է խոչընդոտը, դրա համաձայն առաջանում է ընկալման տարբերություն: «խոչընդոտ» հատկանիշի միջոցով կարելի է բացատրել, որ tanzen և rennen բայերից ղժվար է կազմվում այս կառույցը, քանի որ առաջարժման ընթացքում ընդհանուր առմամբ «խոչընդոտ» չի ներառվում: Սակայն անդրադարձ դերանունը կարող է նաև tanzen բայի հետ էլ հանդես գալ, եթե առաջարժման ժամանակ «խոչընդոտները» մտովի են առաջանում: (9 c) օրինակը համատեքստում հնարավոր է, եթե պարասրահը լի է, և առաջարժումը պարելու միջոցով որոշ ղժվարություններ է ներառում:

(9) a. Er tanzt in den Saal.

b. * Er tanzt sich in den Saal.

c. Er tanzt sich durch die Menschenmenge.

(10) a. Er rannte (* sich) den Flur entlang.

b. * Das Fenster brach sich ins Zimmer.

Այլ կերպ ասած, անդրադարձ դերանունով tanzen և rennen բայերի արտահայտած առաջարժումը պետք է ներառի մեծ ինտենսիվություն, որպեսզի հաղթահարի ենթադրական «խոչընդոտները»: Այդ պատճառով անդրադարձ կառույցը չի կարող կազմվել այն բայերից, որոնք բացառում են բառային նման ինտենսիվություն: «Gehen» և «laufen» բայերի մոտ առաջ արժման եղանակը այլ է, քան «rennen»-ի մոտ այն չափազանց չեզոք է, այդ պատճառով այս երկու բայերը անդրադարձ կառույց չեն կարող կազմել:

(11) Er rennt / * geht / * läuft sich ins Verderben/ Unglück.

Սակայն պետք է նկատել, որ գերմաներենի շարժում ցույց տվող անդրադարձ կառույցը միշտ չէ, որ պետք է պարունակի «խոչընդոտ» հատկանիշը, քանի որ (2) օրինակում այս հատկանիշը բացակայում է: Առաջ արժումը անգլերենի և գերմաներենի վերը նշված կառույցներում պետք է որոշակի նպատակ հետապնդի: Այդ պատճառով այն բայերը, որոնք շարժում են ցույց են տալիս, որը որևէ նպատակ չի հետապնդում, նման կառույցներում չեն կարող ներառվել:

(12) a. * She wandered her way over the field.

b. * She meandered her way through the crowds.

(13) a. * Er bummelt sich über das feld.

b. * Er schlendert sich durch die Menschenmenge.

Երբ խոսվում է այս երկու կառույցների մասին անգլերենում և գերմաներենում, պետք է անդրադառնալ նաև այն բանին, որ Հիթոուզեն տարբերակում է

մարդու սուբյեկտիվ և օբյեկտիվ գոյերը (Hirose, 1997): Մարդու սուբյեկտիվ գոյը գիտակցության, կամքի և դատողության ոչ ֆիզիկական կենտրոնն է ներառում, իսկ օբյեկտիվ գոյը՝ մարդու մնացած մասը՝ ներառելով մարմինը: Մարդը բաղկացած է այս երկու գոյերից: (14a) օրինակում սուբյեկտիվ գոյը ներգործում է օբյեկտիվի վրա՝ սեփական մարմնի վրա: Այստեղ սուբյեկտիվ և օբյեկտիվ գոյերը հասկացական մակարդակում բաժանվում են, և առաջին գոյը վերահսկում է այս մեկը և գիտակցվում, որ օբյեկտիվը՝ մարմինը, շարժվում է դեպի աթոռը: Մարդու օբյեկտիվ կողմը անդրադարձ դերանվան միջոցով ավելի հստակ է արտահայտվում (14b) օրինակում: Դրան հակառակ՝ երկու գոյն էլ հասկացական մակարդակում լիովին կապակցված են միմյանց: Անդրադարձ դերանունը ըստ այդմ հանդես չի գալիս: Հիմնվելով Հիրոսեի գոյի սուբյեկտիվ և օբյեկտիվ տարբերակներին, կարելի է ասել, որ անդրադարձ դերանունը կարելի է դիտարկել որպես օբյեկտիվ գոյի արտահայտություն, և այն կիրառվում է այն ժամանակ, երբ մարդու օբյեկտիվ կողմը՝ մարմինը, սուբյեկտիվից հասկացական մակարդակում կբաժանվի:

(14) a. *Taro sat himself down on the chair.*

b. *Taro sat down on the chair.* —

Եթե մենք (15) օրինակի բայերը ավելի խորը հետազոտենք, կտեսնենք, որ կարող ենք մաս պարել (*tanzen*), վազել (*rennen*) կամ լողալ (*schwimmen*) առանց որևէ տեղ շարժվելու և դրանից ելնելով կարելի է ասել, որ այս բայերի իմաստաբանության մեջ առաջնայինը ոչ թե առաջընթացն է, այլ այն, որ այս բայերը գործունեություն են պարունակում:

(15) a. *Er tanzt gern.*

b. *Er rennt schnell.*

c. *Er schwimmt gut.*

Այս բայերին անհրաժեշտ է, որ նրանք զուգակցվեն բառային-հասկացական կառուցվածքի հետ: Եթե պետք է այս բայերով առաջընթացն արտահայտվի, պետք է դրանց ինչ-որ ձևով մի շարժում ցույց տվող բաղադրիչ կցվի: Մինչ այժմ որպես տեսություն առաջարկվել է Լեվինի և Ջակնդոֆի կողմից «բառային ենթաստորագրությունը» (Levin, 1988, Jackendoff, 1990):

(16) *LCS1 manner → LCS2 [result BY manner]*

Այստեղ LCS1 հապավումը նշանակում է բառային հասկացական կառուցվածք, որն արտահայտում է «վարքի» իմաստ, որն էլ առաջացնում է նոր բառային հասկացական կառուցվածք՝ LCS2, արդյունք իմաստով:

Ըստ այդ տեսության հասկացական և շարահյուսային կառուցվածքների միջև պետք է զուգաձևային հարաբերություն գոյություն ունենա, այսինքն հասկացական ներկայացման մեջ պետք է նաև շարահյուսական իրացում արտացոլվի: Այսուհանդերձ (17) օրինակում «jump» բայի նշանակությունը բացատրելիս առաջ է գալիս անհամապատասխանություն շարահյուսական և հասկացական կառուցվածքների միջև, ինչը ըստ Ջակնդոֆի անշուշտ ցանկալի չէ: Ինչպես Լեվինի, այնպես էլ Ջակնդոֆի մոտ պարզ չէ, թե ինչու և ի՞նչ տեսական ենթադրությունների ներքո է այս ենթաստորագրությունը ի հայտ գալիս: Բացի այդ, նախապես հնարավոր չէ ասել, թե որ բայերը կարող են ենթաստորագրավել ըստ հասկացական *[go]* կառուցվածքի: Օրինակ *tanzen* և *rennen*

բայերը կարող են ըստ հասկացական կառուցվածքի ստորադասվել, բայց պարզ չէ թե lesen, essen կամ trinken բայերի դեպքում ինչու այդպես չէ:

(17) *Willy jumped into Harriet's Arms.*

(18) a. **Gunda liest in die Küche.*

b. **Er isst/ trinkt in den Saal.*

Այդպիսով (19) օրինակի նախադասությունների ներկայացումը ինչ-որ ձևով պետք է առաջարժման նշանակություն պարունակի, քանի որ այդ բայերը ոչ թե առաջ-շարժում, այլ առաջարժման համար անհրաժեշտ գործունեություն են արտահայտում: Կարելի է ասել, որ (19) օրինակի նախադասությունների հիմքում ընկած է (20) օրինակի հասկացական կառուցվածքը և շարժման նշանակությունը ծագում է դրանից:

(19) a. *Er tanzt in den Saal.*

b. *Er tanzt sich durch die Menschenmenge.*

c. *Er bettelt sich durchs Land.*

(20) [*x* ACT] CAUSE [*y* GO path]

Այստեղ *x* ցուցիչը հանդես է գալիս որպես ենթակա, ACT –ը՝ որպես բայ, CAUSE ցուցիչը՝ որպես պատճառ, *y*՝ որպես խնդիր, իսկ [*path*] ցուցիչը գլխավոր գաղափար է աղբյուրի (ուղու) նպատակի համար և իրագործվում է նախդրավոր կապերի *aus/ entlang/ durch/ in*-ի միջոցով: Այս օրինակը նշանակում է, որ «*y*»-ը ինչ-որ տեղ է շարժվում, մինչդեռ «*x*»-ը ինչ-որ բան է անում: Դրանով հասկանալի է, որ *x* i –ն որպես ենթակա հանդես կգա, իսկ *y* i՝ որպես անդրադարձ դերանուն: Եթե մենք ելնենք այն բանից, որ *y* i փաստարկը և [*path*]-ը ոչ թե բայից, այլ հասկացական կառուցվածքից են բխում, կունենանք տեսականորեն ոչ հստակ «բառային ենթաստորադասման» մեխանիզմ և ցո լրացական անդամի կանոնը այլևս հարկավոր չի լինի: Նշված օրինակում հատկանշական է նաև, որ իմաստաբանության և շարահյուսության կապը շատ հստակ է: Անհրաժեշտ է նաև պարզել, թե ինչու (21a) օրինակում անդրադարձ դերանունը երկրորդային է, (21b) օրինակում կարող է հանդես գալ, իսկ (22) –ում պարտադիր է:

(21) a. *Er tanzt (* sich) in den Saal.*

b. *Er tanzt (sich) durch die Menschenmenge.*

(22) a. *Er bettelt * (sich) durchs Land.*

b. *Er tastet * (sich) den Flur entlang.*

Եթե մենք համեմատում ենք գործունեությունները որոնք, արտահայտում են բայերը (21) և (22) օրինակներում, երևում է, որ *tanzen* բայը, ի տարբերություն *betteln* և *tasten* բայերի, ցույց է տալիս մարմնական գործունեություն, որը որոշակի կերպով պատճառ է դառնում առաջարժման: Այստեղ սուբյեկտիվ և օբյեկտիվ գոյերը անբաժանելի են ինչպես (14b) օրինակում, և այդ պատճառով անդրադարձ դերանունը չի իրացվում: Եթե (20) օրինակի հասկացական կառուցվածքը կիրառենք (22) օրինակի բայերի համար, անդրադարձ բայերի հանդես գալը դառնում է անհրաժեշտ, քանի որ (22) օրինակի բայերը, ի տարբերություն *tanzen* բայի, մարմնական գործունեություն են արտահայտում, որը ուղղակի կերպով պատճառ է դառնում առաջարժման: Այստեղ չկա հնարավորություն, որ սուբյեկտիվ և օբյեկտիվ գոյերը իրար միավորված լինեն: Որպես

համաբանություն այս օրինակների համար կարող են ծառայել (23) օրինակի նախադասությունները:

- (23) a. *Er hangelt (sich) über den Bach.*
 b. *Er robbt (sich) durchs Gebüsch.*
 c. *Er schleicht (sich) aus dem Zimmer.*

Այստեղ անդրադարձ դերանվան հանդես գալը երկրորդային է: (23) օրինակի բայերը ներկայացնում են գործունեություններ, որոնք ուղղակիորեն տանում են դեպի առաջարժույթ, ինչպես *tanzen* բայը, բայց այս գործունեությունների ձևը և տեսակը հիմնականում բնորոշ են նախևառաջ ձեռքերի և ոտքերի շարժմանը: Այսպիսով անդրադարձ դերանվան հանդես գալը երկրորդային է: Ահա այստեղ սուբյեկտիվ և օբյեկտիվ գոյերը միակցվում են: Սակայն, երբ այս բայերի մոտ առաջարժման խոչընդոտ է ներառվում և ենթական գիտակցում է իր օբյեկտիվ գոյը, անդրադարձ դերանունը կարող է իրացվել ինչպես (19b) այնպես էլ (24) օրինակում:

- (24) *Er tanzt/rennt sich ins Verderben/Unglück.*

Երբ (20) օրինակում հասկացական կառուցվածքը կիրառվում է այնպիսի բայերի հետ ինչպիսիք են *betteln*, *tasten*, *träumen* կամ *dienen*, որոնք առաջարժման ոչ մի ուղղակի գործունեություն ցույց չեն տալիս, հնարավորություն չկա, որ (20) օրինակում սուբյեկտիվ գոյերը միակցվեն: Դրանով անդրադարձ դերանվան կիրառումը դառնում է անհրաժեշտ: *Hangeln*, *robben*, *schleichen* բայերը, որոնք հստակ գործունեություններ են ապահովում ձեռքերով և ոտքերով, ընկած են այս երկու բայական կարգերի միջև:

Եթե մեկ անգամ ևս (25) օրինակի նախադասություններին դիտարկենք, ապա հարց է ծագում, թե արդյո՞ք դրանք կարող են համադրվել (20) օրինակի համապատասխան նախադասության հետ: Այսինքն, արդյո՞ք այս նախադասություններում իսկապես տրամաբանական կապ կա, որը բխում է CAUSE/պատճառից:

- (25) a. *Er bettelt sich durchs Land.*
 b. *Er tastet sich den Flur entlang.*
 (26) *Er dient sich nach oben.*
 (27) a. *Er kommt nach oben, dadurch dass er dient*
 b. *Dass er dient, bewirkt, dass er nach oben kommt.*
 (28) a. ?? *Er geht durchs Land, dadurch dass er bettelt.*
 b. ?? *Dass er bettelt, bewirkt, dass er durchs Land geht.*

Հնարավոր է առարկել, որ (26) օրինակում նշված կապը առկա է, մինչդեռ (25) օրինակում չկա և (25) և (26) օրինակի նախադասությունները նույն (20) օրինակի հասկացական կառուցվածքով չեն կարող կիրառվել: Լեվինի սահմանումը «պատճառական կապի» վերաբերյալ հետևյալն է:

ա. Երկու դեպքերի միջև կապը այնպիսին է, որ խոսողը հավատում է, որ մի դեպքի տեղի ունենալը՝ պատճառված դեպքը (caused event), տեղի է ունեցել i2 ժամանակում, որը i1 ժամանակից հետո է, որն էլ պատճառող դեպքի (causing event) ժամանակն է:

բ. Պատճառող և պատճառված դեպքերի կապը այնպիսին է, որ խոսողը հավատում է, որ պատճառված դեպքի տեղի ունենալը ամբողջապես կախված է

պատճառող դեպքի տեղի ունենալուց, և պատճառված դեպքը տեղի ունեցած չի լինի կոնկրետ ժամանակում, եթե պատճառող դեպքը դեռ տեղի չի ունեցել, հաշվի առնելով նաև, որ մնացած ամեն ինչ մնացել է նույնը: (Levin, 1988, S. 275)

(29) a. *They were clanging their way up and down the narrow streets...*

b. *She climbed the stairs to get it, crunched her way across the glassstrewn room.*

Այստեղ մի կարևոր տարբերություն կա անգլերենի **one's way** կառույցի և գերմա-ներենի անդրադարձ շարժման կառույցի միջև: (36) օրինակում աղմուկը և շարժումը ժամանակային առումով նույն պահին են լինում, և դրանց միջև չկա պատճառականություն: Գերմաներենի անդրադարձ կառույցները, որոնք պետք է համապատասխանեն (36) օրինակի նախադասություններին իրական չեն:

(30) a. *Sie klapperten sich die schmalen Straßen rauf und runter ...*

b. *Sie ging die Treppe hoch, um es zu bekommen, und knirschte sich durch das mit Glasscherben bedeckte Zimmer.*

Արդեն նշվել է, որ tanzen և rennen բայերի մոտ, անդրադարձ դերանունը միայն այն դեպքում կարող է առաջ գալ, երբ շարժման ժամանակ խոչընդոտ պետք է ներառվի:

(31) a. *Er tanzt (* sich) in den Saal.*

b. *Er tanzt (sich) durch die Menschenmenge.*

c. *Er rennt sich ins Verderben/ Unglück.*

«խոչընդոտ» չափանիշը առկա է նաև (32) օրինակում:

(32) a. ?? *Sie trinkt sich durch das Glas Limonade.*

b. *Sie trinkt sich durch eine Kiste Bier.*

Մյուս կողմից (33) օրինակում անդրադարձ դերանունը անհրաժեշտ է, որտեղ ոչ մի հատուկ խոչընդոտ շարժման մեջ չի ներառվում:

(33) a. *Er bettelt * (sich) durchs Land.*

b. *Er tastet * (sich) den Flur entlang.*

Ուստի «խոչընդոտ» չափանիշը երբեմն ուժի մեջ է, երբեմն՝ ոչ: Դրա պատճառը գործունեության և առաջարժման պատճառական կապն է:

(34) sich durcharbeiten, sich durchbetteln, sich durchessen, sich durchkämpfen, sich durchlavieren, sich durchmogeln, sich durchschleichen, sich durchtasten, sich durchtrinken, sich einhören, sich einlaufen, sich einlesen, sich einschleichen, sich einschmeicheln, sich einsingen, sich einspielen, sich eintanzen, sich emporarbeiten, sich herantasten, sich herausreden, sich hinaufarbeiten, sich hineinarbeiten, sich hineindenken, sich hocharbeiten, sich hochdienen, sich vorarbeiten, sich vorkämpfen ...

(35) [x1 ACT] CAUSE [y1 GO path]

Այս բայերի հիմքում ընկած է (35) օրինակի հասկացական կառուցվածքը: Այստեղ [path] ցուցիչը համապատասխանում է (35) օրինակի բաժանվող բայական հավելմանը և իմաստաբանական և շարահյուսական կապը սխեմայի տեսքով է հետևյալ օրինակում:

[x ACT] CAUSE [y GO path]

(36) a. * *Er arbeitet sich.*

b. * *Er bettelt sich.*

(37) a. *Er rennt auf den Fußballplatz.*

b. *Er rennt sich ins Verderben / Unglück.*

(38) a. *Er tanzt in den Saal.*

b. *Er tanzt sich durch die Menschenmenge.*

«Բառային ենթաստորադասման» շրջանակներում այս նախադասությունների ուսումնասիրման համար երկու տարբեր կանոններ են կիրառվում: (37a) օրինակի նախադասությունը ենթարկվում է [x GO to y] by [x run] հասկացական կառուցվածքի բանաձևին, իսկ (37b) օրինակը՝ [x1 run] CAUSE [y1 go to z] հասկա-ցական կառուցվածքի բանաձևին: Դրանից բացի, փորձ է արվում բացատրել, թե ինչու (39) օրինակի նախադասությունները հնարավոր չեն:

(39) a. **Gunda liest in die Küche.*

b. **Er isst / trinkt in den Saal.*

«Բառային ենթաստորադասման» շրջանակներում պարզ չէ, թե ինչո՞ւ *lesen*, *essen* կամ *trinken* բայերը չեն ենթարկվում [GO] հասկացական կառուցվածքին: Քանի որ այս բայերը ցույց չեն տալիս գործունեություն, որոնք անմիջապես առաջարժու են ցույց տալիս, պետք է անդրադարձ դերանունը հանդես գա, եթե այս բայերով պետք է արտահայտվի առաջարժում: (40) օրինակի նախադասությունները հնարավոր են, որտեղ անդրադարձ դերանունը կիրառվում է և (փոխաբերական) առաջարժում է ի հայտ գալիս:

(40) a. *Gunda liest sich durch das Gesamtwerk von Goethe.*

b. *Er isst sich durch eine große Pizza.*

c. *Sie trinkt sich durch eine Kiste Bier.*

Չի կարելի ասել, որ **one's way** կառույցում իմաստային մեկնաբանումը գերիշխող տեղ է գրավում: Գոլդբերգը այն տեսակետն է առաջ քաշում, որ վարքի մեկնաբանումը իմաստային մեկնաբանման ընդլայնումն է: (Goldberg, 1995)

way construction
Means

Way construction
Manner

Այս նկարագրության մեջ շարժման միջոցը հաճախ նաև շարժման եղանակ է որոշում: (41) օրինակի *roll* բայը ոչ միայն շարժման միջոցը (Joe caused the ball to move by rolling), այլ նաև դրա եղանակն է բնորոշում: (Joe caused the ball to move while rolling).

(41) *Joe rolled the ball into the room.*

Լիովին բացատրել հնարավոր չէ, թե ինչո՞ւ գերմաներենի անդրադարձ կառույցում հստակ վարքի մեկնաբանում չի տրվում: Գուցե խնդիրն այն է, որ գերմաներենի անդրադարձ շարժման կառույցի իրացումը բնորոշվում է (20) օրինակի հասկա-ցական կառուցվածքով և դրանով երկու նշանակությունների միջև՝ գործունեության և առաջարժման, կարելի է տեսնել պատճառական կապ: Եվ այն նախադասությունները, որտեղ երկու նշանակությունները պատճառական կապ ունեն, ավելի հեշտ են հասկացվում բան նրանք, որտեղ երկու նշանակությունների միջև միայն ժամանակային զուգահեռներ կան:

Գրականություն

1. Goldberg, A. (1995): *Constructions: A Construction Grammar Approach to Argument Structure*. Chicago
2. Engel, U. (1996): *Deutsche Grammatik*. Heidelberg
3. Hirose, Y. (1997): *Die Ausdrücke, die die Menschen bezeichnen, und Anapher*. Heidelberg
4. Jackendoff, R. (1990): *Semantic Structure*. Cambridge
5. Levin, B. /Rapoport, T. R. (1988): *Lexical Subordination*
6. Levin, B. /Rapoport, T. R. (1995): *Unaccrativity*. Cambridge

Н. ХАНОЯН

ОСОБЕННОСТИ АНГЛИСКОЙ СТРУКТУРЫ *ONE'S WAY*
И НЕМЕЦКОГО ВОЗВРАТНОГО МЕСТОИМЕНИЯ

В данной статье делается попытка показать, что между английской конструкцией *one's way* и немецкой конструкцией с возвратным местоимением *sich* есть некоторые сходства, которые можно объяснить особенностями немецкого языка. Для употребления возвратного местоимения *sich* играет важную роль то обстоятельство, отделено ли 'объективное' движущая тело концептуально от "субъективного".

N. KHANOYAN

THE PECULARITIES OF THE *ONE'S WAY* CONSTRUCTION IN ENGLISH AND A
TYPE OF REFLEXIVE CONSTRUCTION IN GERMAN

In this article I show that there are some important common features in the *one's way* construction in English and a type of reflexive construction in German, and that this use of the reflexive pronoun and possible interpretations of this reflexive construction can be explained in terms of a general pattern in German.